դպրոցի (1874), Ղարաբաղի աստղագէտը (1882), Խրիմեանի կենսագր. տեսութիւն (1892): — ՎՐԱՑ ՀՐՏՐՉԿ. ԸՆԿ., Զրոյցներ հողի մասին (1893), Մանուկների հոգատարութիւնը, Մարոնի պլոմը, ևն. ևն.: — ՎԵՐԻՋԵԻ ԵՒ ԿԱՄԷՄՊԱԽԷՐ, Մալարիա (1902), «Լոյս» ևն.: — Ա. ԲՈՒԹԱԹԵԼԱՉԷ, Մուսա (1902), Մի խոստովանութիւն: — ԹԱԻԱՐԹԲԻԼԱՉԷ, Երկու գրոյց (1903) ևն.: — ԳՈՒՏՏԵՆԲԵՐԿ, Հայրենասիրութիւն (1906): — ԵՊՕԽԱ, Հեռո՛ւ փախիր գրական խուլիգանից (1907), Թուրքիայի ապագան, Ձեռնարկ տրամաբանութեան: — Կ. Պ. ԿՈՎԼՈՍԿՈՎ, Հայ գրչագրեր Ս. Թովմայի վանաց (. . .): – ՁՄՕԲԱ, Խօլէր (1907): — ՇՐՕՄԱ, Գր. գիտ. ժողովածու (1908), Երիտասարդ Թուրքիան և Հայերը: – ԳԻՒՍՏԵՐՏԻՉ, Շունն ու կատուն (1908), Խօսող ձուկը: — «ՊՐՕԳՐԷՍ», Մայրենի լեզու (1908), Հին Արևելքի քաղաքակրթութիւնը: — ԿՈՒԼՏՈՒՐԱ ԸՆԿ., Պօետի երազը (1909) ևն. ևն.: — ՆԱԳԻԲԳԱ, Այրբենարան (1909): — ԵԿՕՆՕՄԻԱ, Զատկական զառներ (1909): — ԷՄՊԷՐԱՆՏՕ, Սօցօվիա-Նեամէլով (1910): — ՇԱՊՕՐՆԻ, Երուանդ գօշ (1911): Եւ դեռ. ուրիշներ:

## ՌՈՒՍԻՈՅ ՄԻՒՍ ՔԱՂԱՔՆԵՐԸ

365-369. **ՇՈՒՇԻ** առաջին անգամ տպ. գործունէութիւն ունեցած են ԲԱԶԼԷ-ԲԱՆԿԱՆ ՄԻՍԻՕՆԱՐՔԸ որոնց լոյս ընծայած գիրքերէն յիշենք՝ Աւետ. հայերէնով՝ Նոր Կտակարանը (1832): Այս գիրքէն առաջ Շուշիի մէջ անանուն տպագրուած կը գտնենք 3 գիրք. — **Համառօտ** աժ.ային վկայութեանց, **Ընթերցուածք** ի Ս. Գրոց Հին Կտակարանի (1829), **Բառարան** համառօտ գրբ. աշխ. (Յովսէփ Վ. Արցախեցի) 1830: ** ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ՏԵՍՉՈՒԹԵԱՆ տպարանը կը բանայ Ղարաբաղի առաջնորդ Պաղտասար որ Միխիթարեան թողուցած տառերը գնած էր: Այս տպարանը վերջէն նոր տառեր կ'ընդունի Մօսկուայէն, բայց 70ական թուականին փճացումի վիճակին կը հասնի՝ երբ Խ. Վ. Սոսիաննէ հոնկէ լոյս կ'ընծայէր **Հայկական աշխարհի** (*) քանի մը թիւերը: Յետոյ վերաբացուելով՝ լոյս ընծայած է մեծամասնութեամբ Լէօի երկերը. — Վէ՞պ թէ պատմ. (1887), Ծայրեր, Կոյրի աղջիկը, Վանան Մամիկոնեան (1888), Իմ յիշատակարանը, Սպանուած հայրը (1891), Թարախման գիշերը (1892), ևն.: ** ՄԻՐՋԱՋԱՆ ՄՀՏ. ՅԱԿՈԲԵԱՆՑ տպած է Րաֆֆիի **Խենթը** (1881), Արաղը տարին կտարի (1883), Ուխտաւորի յիշատակարանը (1885), Սկայորդի (1886), Տարաս բուլ'բա. (Գոգոլ) ևն.: ** ՏԷՐ-ՍԱՀԱԿԵԱՆՑ (1891 . . . 1911) տպած է Կենդանական . . . մագնէտիզմ, Մաքեր, Նորագոյն տեսող. ուսման . . . նախագիծը, Զրոյցներ, ևն. ևն.: ** Մ. ԲԱԲԱՋԱՆԵԱՆ 1910 ին տպած է Շուշի-Գանձակ ճանապարհի համառօտ հաշիւ:

370. **ԹԷՈԴՈՍԻԱ** ծննդավայրն է անման ծովանկարիչ Այվազովսկիի, որուն Բարիզ հաստատուած եղբայրը՝ Գաբրիէլ Վ. երբ Պեսարաբիոյ առաջնորդ եղաւ, փոյթ տարաւ կրթ. գործին, ՅԱՐՈՒԹԻՒՆ Պ. ԽԱԼԻՊԵԱՆՑի օժանդակութեամբ հիմնելով Խալիպեան ուսումնարանն ու տպարանը, որուն «Արամեան» տառերը Բարիզէն բերել տուած էր: Ազնուազարմ բարերարը ծընած է Նախիջևան 22 Փետր. 1790 ին: 13 տարի քաղաքագլուխի պաշտօնը վարած է, մեծամեծ ծառայութիւններ մատուցանելով ռուս կառավարութեան և իր ազգակիցներուն: Գարձեալ, իր ծախքով է որ կառուցուած է այս քաղաքին Ս. Յարութիւն եկեղեցին: Մեռած է 24 Ապրիլ 1871 ին: — ԽԱԼԻՊԵԱՆ ՏՊԱՐԱՆԷՆ լոյս ընծայուած են **Մասեաց Աղաւնին'** Ե. տարիէն սկսեալ, Թուարանութիւն, Դասագիրք (եր), Լսարան կենցաղօգուտ գիտելեաց, Պատմ. Ս. Գրոց, Նախակրթականք (1860), Եղիշէ, Արշակ Բ., **Ալաճրանկս** (Խորէն Վ. Գալֆայեանի աշխ. Ա. կատակերգութիւնը 1861), Ընթերցարան լեզուի Ռուսաց (1862), Հեգարան (1865), Աղօթք (1866), Օրացոյց (1867), Եօրն Խօսք, Ուղղագրութիւն (1869), Բերականութիւն (1871), Յաւիտ.



ՅՐ. ԽԱԼԻՊԵԱՆՑ

(*) Շուշի հրատարակուած թերթերէն կան Սիմ. Հախումեանցի **Գործ**ը (1882-3) եւ **Ղարաբաղ** (1911-2):